

2458

ԱՍԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃ. ԴՊ. ԳՐԱԴԱՐԱՆ
ԻՐԱՆԻ ՅԵՎ. ՄԱՐԴԿԱՆՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ

№
33

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

ՖԵՈՂԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊՐԱԿ Գ.

ՓՈԽԱԳՐՈՒՅԻՆ ՀՈՒՍԵՐԵՆԻՅ ՅԵ. ԼԱՆԱՅԱՆԻ

Բ. ՎԵՐԱՓՈԽՎԱԾ ԵՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

9(47)

9-88

2011-07 24 JAN 2006

2-88
ԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 3 ԴԱՐԵՐ ՅԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ, № 3

ՅԵ. ԶՎՅԱԳԻՆՑԵՎ ՅԵՎ Ա. ԲԵՐՆԱՇԵՎՍԿԻ

1003
13353

= ՖԵՈԴԱԼԻԶՄԻ

ՇՐՋԱՆՈՒՄ =

ՊՐԱԿ Գ.

Փոխադրություն ուսուցիչից ՅԵ. Լ. Ա. Լ. Ա. ՅԱՆԻ

Բ. ՎԵՐԱՓՈԽԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

13 APR 2013

2958

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՑ

1. ՎԱՐԵԼԱՀՈՂ ԲԱՆԱԼՈՒ ՏՆՏԵ-
ՍՈՒԹՅՈՒՆ.

Յեթե յոթնարյուր տարի առաջ մարդ կարողանար բարձրից նայել Վլադիմիրի նահանգի այժմյան Մուրոմյան գավառի վրա, իր վոտների տակ մի այսպիսի տեսարան պիտի տեսներ. ամեն կողմ տարածվում է անսահման, կանաչ անտառը, վորի միջով ձգվում է, վորպես արծաթե լալն ժապավեն, Ոկա գետը: Անտառի այս ու ալն մասում ընկած են, կարծես վորպես կղզիներ, փոքր դաշտեր, փոքրիկ տնակներով: Այս դաշտերի վրա վիտում են մարդիկ, յետ ու առաջ գնում, կարծես մի գործ են շինում. վորքան փոքրիկ, վորքան թույլ և աննշան են թվում դրանք այս անսահման, անվերջ անտառի մեջ: Թվում է, թե ահա անտառի կանաչ պատերը կմիանան և կուլ կտան այդ կղզիները, իրենց տնակներով ու մարդկանցով: Այդ հին ժամա-

նակներում այս անանցելի անտառներն ու ճահիճները ծածկում եյին վոչ միայն Մուրոմյան գավառը, այլև Ոկայի և վերին Վոլգայի մեջ ընկած ընդարձակ տարածության մեծ մասը, վոր այժմ կազմում ե Մոսկովի, Ռյազանի, Եարասլավի և Վլադիմիրսկի նահանգները: Այս անտառներում ոթևան եյին գտնում հարավային Ռուսաստանի գլուղացի փախստականները: Վորոնց հանգիստ չեյին տալիս թափառականների և իշխանների թշնամությունը:

Սրանք անտառում ընտրում եյին գետի մոտ և փոքր ինչ բարձր տեղ, մաքրում եյին ծառերից փոքրիկ տեղեր և վարում եյին, ապրում եյին փոքրիկ տնտեսությունով, վորովհետև բնակչության համար հարմար տեղ քիչ կար: Բայց այս չեկողները մեծ տարածության հետամուտ չեյին լինում. չերկրագործը թափառական չե, վորին պետք ե ընդարձակ արոտատեղի: Այնտեղ, ուր ապրում ե մի թափառական անասնապահ՝ չերկրագործությամբ կարող են ապրել միջանի մարդիկ: Յեկվորը ախքան հող եր մշակում, վոր կարողանում եր կերակրել իրեն իր ընտանիքով: Նա այդ հողը համարում եր իրենը, քանի դեռ աշխատում եր նրա վրա: Այս պատճառով ել ասում եյին «այն հողն ե իմը, վորի վրայով անցել ե իմ կացինն ու արորը»:

1920 թվին Ոկայի մոտիկ մի դաշտում ապրում եր Կիևից փախած մի ընտանիք՝ տղամարդը, կինը, 17 տարեկան տղեն և յոթնամյա աղջիկը: Ապրում եյին դրանք այդտեղ արդեն հինգ տարուց ի վեր: Սկզբում դժվար եր յեղել ընտելանալ այդ նոր տեղին. խուլ ու մույլ եր, թվում այս նոր չերկիրը, սակայն հանգիստ եր, պետք եր միայն գիտենալ աշխատել: Այստեղ պետք եր կռվել վոչ թե թափառականների, ալ անտառի հետ. պետք եր կացնով ու կրակով խել նրանցից ամեն մի թիզ հողը: Ահա և այժմ բնակչության վեցերորդ տարում պետք եր նոր դաշտ պատրաստել, առաջինն արդեն հոգնել եր և լավ բերք չեր տալիս: Այս պատճառով հայրը վորդու հետ գնացին տեղ վորոնելու:

Յերկար թափառեցին նրանք անտառում, մինչև վոր հարմար տեղ գտան. ճիշտ ե, իրենց բնակատեղից հեռու յեր, բայց դրա փոխարեն գետը մոտ եր և անտառը շատ մեծ չեր: Գտան և սկսեցին աշխատել: Համերաշխ հնչում եյին կացինները խուլ անտառում, մեկը մյուսից հետո ընկնում եյին ծառերը և որեցոր ափելի և ափելի ընդարձակվում եր դաշտը: Բայց հեշտ չեր կտրել միապաղաղ անտառը. յերկար աշխատեցին կացիններով մեր չերկրագործները, շատ քրտինք թափեցին, մինչև վոր մաքրեցին մի յեր-

կու ղեսյատին տեղ: Վերջացնելով այդ աշխատանքն վերադարձան տուն: Այս տարի այդ տեղում ել վոչինչ չունեցին անելու:

Հետևյալ տարին վերսկսեցին աշխատանքը, ամառվա վերջին մտածեցին ցանել: Կտրտած ծառերը այդ տարվա ընթացքում փոքր լինչ դուրացել էին, նրանք կրակ դրին այդ ծառերի տակ զանազան կողմերից: Կրակը ոձապտույտ անցավ չոր ճյուղերի վրայով և շուտով անտառում սկսվեց վառվել մի հսկայական խարույկ:

Թանձր ծուխը բարձրացավ յերկինք, ճյուղերը ճտճտում էին և կուչ գալիս կրակի մեջ: Յերբեմնապես ծխի միջից դուրս եր պրծնում հրային լեզուներով բոցը և խուրձերով թափվում էին կայծերը: Վախեցած թռչուններն աղմուկով թռչում էին անտառի վրայով, գազանները հեռու էին փախչում այդ վտանգավոր տեղից:

Վերջապես կրակը հանգավ: Ամբողջ դաշտը ծածկվեց մոխրի կույտերով, վորի միջից տեղտեղ ցցվում էին ծառերի խանձված կոճղերը: Աշնանը դաշտը ցանեցին առանց վարելու: Հողն սկսեցին վարել յերկրորդ ցանքսին, ամենադժվար բանն արդեն արված եր, յերկրագործին ոգնության եր հասել այս գործում յերկաթե կացինը: Նույն աշնանը տեղափոխվեցան նոր տեղը, տեղափոխեցին իրենց ունեցած չունեցածը:

Բայց յերկար ժամանակով: Վոչ ավելի, քան 5-6 տարով: Հետո նորից պետք եր կտրել անտառը, վառել ծառերը, վորպեսզի մոխրով պարարտացնեն յերկիրը, այլապես այստեղ հացահատիկ չի բուսնիլ:

Այսպիսի տնտեսություն եր տարվում այս անտառոտ ամբողջ տեղում: Այդ տնտեսությունը կոչվում եր վարելահող բանալու տնտեսություն:

Համառ և ծանր աշխատանք հր հարկավոր, վորպեսզի կտրելի լիներ վարելահող պատրաստել, իսկ խեղճ յերկրագործը հազիվ եր հաց հալթայթում իր ընտանիքին: Գործիքներ քիչ կային, այն ել վատ: Ընդամենը յերկաթե կացին ու դանակ, փայտե արոր ու տափան: Այժմ յերկաթն ու պողպատը սովորական գործիքներ են, վոր ամենքը փոքր ի շատե կարող են ձեռք բերել, մինչդեռ հնումը յերկաթ քիչ կար և շատ թանգ եր գնահատվում: Կոտրվեց կացինը, այնքան ել հեշտ չեր նուր ձեռք բերել:

Բացի յերկրագործությունից, մարդիկ պետք ե զբաղվեյին նաև ոժանդակիչ զբաղմունքներով՝ վորսորդությամբ, ձկնորսությամբ և վայրի մեղվապահությամբ:

Այսպես անցնում էին յերկար ու ձիգ տարիներ, մարդիկ բազմանում էին ու բազմանում,

կտրոււմ ու վառոււմ անտառները, մեծացնում վա-
րելահողերը:

Մարդիկ խլեցին անտառից յերկրագործու-
թյան հարմար ամբողջ հողը: Այնտեղ՝ ուր կանգ-
նած եյին մենավոր տնտեսություններ, յերևա-
ցին ամբողջ բնակավայրեր:

Տասը թափառական կարող եյին ապրել այն հո-
ղամասի վրա, վարից կարող եր ոգտվել միայն
մի վայրենի գազանավորս:

Այդ ձևի տնտեսության ժամանակ յերկրա-
գործին հարկավոր ե տառն անգամ ավելի քիչ
հող, քան թափառական անասնապահին, և հար-
յուր անգամ քիչ, քան գազանավորսին:

2. ՅԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ: ՅԵՌԱԴԱՇՏՅԱՆ ՍԵՐՄՆԱՎԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Գարնանային դաշտային աշխատանքների ամե-
նայեռուն ժամանակն ե: Դյուղացիներն ոգ
տվում են լավ լեղանակից և աշխատում վեր-
ջացնել գարնանացանը: Մըրջյունների պես տըբ-
նում են նրանք իրենց արտերի վրա, միջա-
նիսը վերջացնում են վարը, մյուսները ցանում
են, իսկ յերրորդները տափաններով տափանում
են ցանքսերը: Միայն յերբեմն գարնանացանի

դաշտերում յերևում են չվարած մոխրագուլն
շերտեր: Վորրի նման նայում են նրանք մշակ-
ված արտերի միջից: Պետք ե վոր այս շերտե-
րի տերերին մի վորևե դժբախտություն պատա-
հած լինի, այլապես նրանք չեյին կորցնի թան-
գազին ժամանակը. այժմ ամեն մի ժամը թանգ
ե: Ձեռից բաց կթողնես հարմար ժամանակը—
կմնաս առանց գարնանացան հացի:

Վերջացած ե ցանքսը: Մնում ե սպասել հըն-
ձին: Այս միևնույն արտից անցյալ տարի հավա-
քել եյին աշնանացան հացահատիկը, այժմ կհա-
վաքեն գարնանացանը, իսկ հետո ել հարկավոր
ե, վոր հողը հանգստանա: Մինչև մյուս տարվա
աշունը նրա վրա վոչինչ չպետք ե ցանեն. նա
մնալու լե հանգստանալու: Աշնանացանի և գար-
նանացանի համար գործ կըրվեն ուրիշ յերկու
դաշտեր: Սրանցից մինը արդեն հանգստացել ե
մի տարի, իսկ մյուսը դեռ պետք ե մի տարի
ծառայել, վոր հասնի նրա հանգստանալու ժա-
մանակը:

Յեվ ահա այսպես ե կատարվում հնուց. յե-
րեք արտերից ամեն մինը յերկուական ցանքսից
հետո մի տարի հանգիստ ե մնում:

Դուք կասեք, թե ո՞վ չգիտե, վոր վարելահողը
բաժանվում ե յերեք դաշտերի՝ աշնանացանի,
գարնանացանի և հանգստյան:

Ճիշտ է. այժմ ամեն մի գյուղի յերեխա այս գիտե. մինչդեռ մեր նախնիքը հազար տարի առաջ այդ չգիտեյին: Անտառոտ տեղերում ծառերը կտրատում էին, դաշտային տեղում խոտը վառում և վարում, ցանում: Չորս-հինգ անգամ ցանելուց հետո այդ թողնում էին, մի ուրիշ հողաբաժին ցանում, հետո՝ մի յերրորդը:

Մի 25 տարուց հետո յերկրագործը վերադառնում եր առաջին հողաբաժին, վորն արդեն հանգստացել եր և կարող եր լավ բերք տալ: Այս տեսակ վարը կոչվում է միդաշտյան, վորովհետև միշտ ցանվում է միայն միևնույն հողաբաժինը:

Միդաշտյան սիստեմից, վորի ժամանակ մի քանի տարի ցանած և հոգնած հողաբաժինները թողնվում էին անմշակ, անցել են յեռադաշտյան սիստեմին: Սրա ժամանակ հանգստանում է միայն հողաբաժնի յերրորդ մասը, իսկ յերկու յերրորդը յենթարկվում են ամեն տարի աշնանացանի և գարնանացանի: Ահա այս յեռադաշտյան սիստեմն ել գործադրվում է այժմ մեր մեջ:

3. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՆՈՂԻ ՆԵՏ ԿԱՊԵԼԸ

Իվան Վասիլևիչ Թադավորի և մեծ իշխանի որով յեղել է Ստեփան անունով մի մարդ, վո-

րին տվել են Բեզուկլադիցա մականունը: Նա գյուղացի է եղել, միայն սեպհական հող չի ունեցել, ապրել է Աֆանասիյ Բույնոսով իշխանի վորդու կալվածքում: Սա ընկերացել եր իր սանահեր Սուչոկ մականվանված Միքայելի հետ և կալվածատեր Բույնոսովի Վարաբյովո գյուղի ազատ հողերում շինելելին իրենց համար խրճիթ, մառան, 2 ախոռ, և պայմանավորվել էին, վոր իրենց տրվի վարելահող, յերկու չետվերտ հաճար, նույնքան վարսակ, այդչափ ել հացահատիկ այն պայմանով, վոր կալվածատիրական բոլոր ծանրությունները կրեն, պետական հարկերը վճարեն, կալվածատերին հասանելի տուրքերը տան և կալվածատիրոջ հրամայած բոլոր գործերը կատարեն:

Այսպես կապվել էին Բեզուկլադիցան և Սուչոկը Բույնոսով կալվածատիրոջ հետ և սկսել ապրել նրա գյուղում: Ապրեցին մի տարի, յերկու տարի, յերեք տարի... և փաթաթվեց նրանց վզին մի չարաբաստիկ ցավ, մի ցավ, վորից վոչ մի կերպ չեն կարողանում ազատվել:

Մի տարի ամբողջ Ռուսաստանում ցանքսը չեկավ. աղքատությունն ու սովամահը տիրեց ամբողջ յերկրին, շատ զավառներին մարդիկ քաղաքները քաշ յեկան և վողորմությունով սկսեցին ապրել, իսկ գյուղերում մնացողները

քաղցից թուլացան և շատերը սովամահ եղան։ Տարածվեցին տարափոխիկ հիվանդութիւններ։ Այսպես՝ հացի պակասութիւնից և տարափոխիկ հիվանդութիւններից դատարկվեցին քաղաքները, տվաններն ու գյուղերը։ Միջախել Սուչոկն ու Նրա կի՛նն ել կենդանի չմնացին։ Խեղճ վորքերը դառն արցունքով որնիբուն բղավում ելին։

Յուրեւեց գուղի փողոցում մեծ աղմուկ է տիրում։ հավաքվել են այստեղ ամբողջ գավառից գյուղացիներ։ այստեղ է և՛ Ֆեդյա Դուստինը, և՛ Դանիլկո Մուրաշը, և՛ Ջրաղացպան Նեկլյուգինը, այստեղ է և՛ համախօսի ավագը, և՛ հարկ դնողները, նրանք, վոր նստում են գյուղի հրապարակում և պետական հարկը բաժանում գյուղացիների վրա։ Ահագին աղմուկ է բարձրացել. և ամենից ավելի Բեզուկլագիցան է բղավում։ նա շատ վիրավորվել է, վոր ավագը նրան մլուսներից ավելի է հարկ նշանակել։

«Կեղեքվեցանք, բղավում է նա, սնանկացանք անբերրութիւնից, տարափոխիկ հիվանդութիւններից, բռնութիւնից, հարկերից, ել չենք կարող ամեն մի դատարկ բանի համար վճարել։ Բղավում է Ստեփանը, գոչում է Ստեփանը, սակայն ավագը նրան չի լսում։ «Այդ իմ գործը չե, առում է նա, ինձ հրամայված է առանց խղճա-

լու, առան խնայելու, լիովին հավաքել պետական հարկը։ ծանրութիւնը մենք բոլորս ել կրում ենք, մեկս մյուսի համար վճարում, և յեթե դու ել, Ստեփան, չլինիս, քո նեղութիւնդ ել մենք կբաշենք։

Ստեփանը գլխակոր գնում է տուն, իր յետին չքավորութիւնը խփում է աչքին։ մերկութիւն, դատարկութիւն, ցրտութիւն, քաղց, ուժասպառութիւն... Ինչո՞վ վճարե պետական հարկը։

Յեկավ գարունը. հուլիսին արծարծվեցին, ամրան աշխատանքից հետո առատ աշունը վոտի կանգնեցրեց խեղճին։ բայց հեռու չեր ձմեռը. միկերպ քաշ տվեց, մինչև վոր եկավ Ս. Գեվորգի տոնը։ Ստեփանը դգաց, վոր քաղցը կրկին սպառնում է իրեն, մտածեց գլուխն առնել, հեռանալ, բայց պետք եր կալվածատիրոջից ազատվել, նոր զբաղմունքով նոր տեղում բախտ վորոնել։

Առաւոտը վաղ, մտատանջ ու համր քայլերով Ստեփանն ուղեվորվեց դեպի կալվածատեր Բույնոսովի տունը։ Վերջինս կանգնած եր կտրանը. հենց վոր Ստեփանին տեսավ, իսկույն հասկացավ նրա մտադրութիւնը։ «Բարե, ասեց, Ստեփանիկ, միտքդ դրել ես հեռանալ»։ Ստեփանը լուռ կանգնեց, կալվածատերը շարունակեց. «Հիշ՞ում ես պայմանդ, հիշ՞ում ես վոր վերցրիր յեր-

կու չետվերտ հաճար, այդքան ել վարսակ, միայդչափ ել հացահատիկ, — այդ բոլորը չես վերադարձրել. վոչ հաճարը, վոչ վարսակը, վոչ հացահատիկները, և հանգիստ ապրեցիր 8 տարի շարունակ, այժմ դեռ յերեք տարվա ել տանդ վարձը չես վճարել՝ ուզում ես հեռանալ. կարող ես այդ բոլորը վճարել: Այսպես վրա եր տալիս Բուլնոսովը, իսկ Ստեփանը լռում եր: Ստեփանը տեսնում ե, վոր չի կարող հեռանալ. ծանր կարիքը շատ խիստ ե կապել նրան Բուլնոսովի հետ: Ահա քեզ սե՛ր:

XVI դարում Ռուսաստանում Ստեփան Բեզուկլադիցայի նման շատ գյուղացիներ կային: Համարյա ամբողջ հողը պատկանում եր ազնվականներին, կալվածատերերին և վանքերին, և գյուղացիները մի կերպ կապալով եյին վերցնում: Գյուղացիները գալիս եյին կալվածատիրոջ մոտ մեծ մասամբ դատարկ ձեռներով, և նրանից ստանում եյին սերմ, յերկրագործական գործիքներ, խրճիթ, վարելահող և այլ ամեն տեսակ անհրաժեշտ բաներ, առանց վորոնց չեր կարելի ապրել: Կոռին և հարկին ավելանում եր նաև պարտքը: Սովորության իրավունքով գյուղացին կարող եր վճարել կալվածատիրոջը աշնանը՝ նույնմբերին իր պարտքը և ժամանակա-

կետից առաջ հեռանալու համար ել տուգանք, և գնալ ուր ուզում եր:

Բայց շատ բչերին եր հաջողվում այդ: Նույն իսկ այն դեպքում, յերբ գյուղացին շատ փոքր գումար եր վերցրել, տաս տարուց հետո հեռանալիս ելի մի 300 ռ. պետք ե վճարեր կալվածատիրոջը. իսկ այն ժամանակ այդ 300 ռուբլին արդեն մեծ գումար եր համարվում: Ո՞վ կարող եր վճարել: Միայն մի յելք եր մնում — ծածուկ հեռանալ, փախչել:

4 ՍԵՎ ՈՒ ՍՊԻՏԱԿ ՎՈՍԿՈՐ

Մի՞շտ են յիղել մեծ կալվածատերեր. — Յերկրագործական աշխատանքը շատ ավելի լավ ե սնուցել մարդկանց, քան նախնական փորսորդութունը: Նա ապահովել ե մարդու սնունդը շատ ավելի, քան գազանների վորսը, իր պատահարներով և վտանգներով: Յերկրագործները առատ տարիներին կարող եյին ձմռան համար այնպիսի մեծ պաշար պատրաստել, վորի մասին փորսորդները գաղափար անգամ չեն ունեցել. հացահատիկներ, տնային կենդանիներ, թռչուններ, անասնապահության ու թռչնաբուծության արդյունքներ, այս բոլորը յերկար ժամանակով ապահովում եր յերկրագործին, և ահա թե ինչու յերկրագործ ժողովուրդը անհամեմատ արագ եր

բազմանում, քան վորսորդական տոմսերը, վորոնք դարերի և հազարավոր տարիների ընթացքում մնում եյին սակավանդամ, թուլլ, և ստիպված եյին լինում նահանջել յերկրագործների հարձակումների միջոցին:

Յերկրագործի այն համեմատական բարորությունը միշտ ել արժեցել ենրան մեծ, լարված աշխատանք. իզուր չե վոր ամառվա դաշտային աշխատանքներն աշտմ ել տաժանելի յեն համարվում: Սակայն միայն այս դաշտային ծանր աշխատանքը չե չեղել յերկրագործի գլխավոր տանջանքը: Նրանց անխուսափելի ցավը յերկար ժամանակ կայացել ե նրանում, վոր ինքնուրույն չեն յեղել, վոր իրենց ամբողջ կյանքում կախված են չեղել հարուստ մարդկանցից, — մեծ մասամբ նրանց համար են աշխատել:

Դուք կարդացիք, թե ինչպես մեզանից 400 տարի առաջ ռուս գյուղացի Բեզուկլագիցան ընկավ կալվածատեր Բույնոսովի թակարդը և չկարողացավ նրանից հեռանալ, հակառակ իր բոլոր ցանկության: Այդպիսի անելանելի դրության մեջ եյին ընկել մի ժամանակ շատ գյուղացի յերկրագործներ, վոչ միայն Ռուսաստանում, այլ և ուրիշ յերկրներում: Ի՞նչ եր այսպիսի ծանր կախման պատճառը, ինչո՞ւն եր կայանում Բույնոսովների ուժը, վոր թույլ եր տալիս նրանց՝ իրենց

հետ կապված պահել գյուղացիներին և ստիպել աշխատելու Բանը նրանումն ե, վոր յերկրագործությամբ չի կարելի պարապել առանց վարելահողի, առանց արորի, ու գութանի, առանց աշխատող յեզների, առանց սերմի: Պետք ե ունենալ, գոնե, մի փոքրիկ վարելահող, պետք ե ունենալ, գոնե, մի քանի փոքրիկ գործիքներ, առանց վորոնց չի կարելի վար ու ցանքս անել, ցանքսը հնձել, կալել ու կալսել: Մի խոսքով՝ տնտեսական շատ պայմաններ կան, վորպիսոքի կարելի լինի յերկրագործությամբ պարապել. այս շատ ավելի բարդ ե, քան վորսորդությունը: Սա պահանջում ե արդյունաբերական միջոցներ, առանց վորոնց գյուղացին չի կարող գործադրել իր աշխատող ձեռքերը, վորքան ել ուժեղ լինեն նրանք: Մի ժամանակ, շատ հին անցյալում, նախնական սաղմնային յերկրագործության միջոցին, մարդիկ վարելահողը չեյին մշակում, անասուններ չեյին աշխատեցնում, վարելահողը շատ ընդարձակ եր և վոչ վոք չեր գնահատում այն: Այն ժամանակ ցանքս անողը կարող եր առանց ուրիշի ոգնության ել իր գործը կատարել. այն ժամանակ յերկրագործները միմյանցից շատ չեյին տարբերվում, վոչ իրենց հմտությամբ, և վոչ ել ունեցած միջոցներով: Բայց ժամանակի ընթացքում յերկրագործությունը հետզհետե դժվարա-

ցավ և բարդացավ։ Նա հնարավոր դարձավ միայն նստակյաց կիսնքի ընթացքում, վորոշ վա-
րելահողի շրջանում, և պահանջեց արտադրական
միջոցներ։ Յերկրագործութունը ոժանդակիչ, պա-
տահական զբաղմունքից դարձավ մարդու հիմնա-
կան, գլխավոր պարապմունքը։ Սակայն դրա հետ
միասին յերկրագործների միջից առանձնացան և
բարձրացան ուժեղները թուլերից, հարուստներն՝
աղքատներից, շատ հող ունեցողները՝ քիչ կամ
բոլորովին, չունեցողներից։ Ուժեղները խելով
հողը՝ հարստացան։ Յեւ վորովհետև հողը կազ-
մում էր գլխավոր հարստությունը, ուստի սրա-
նով նրանք կախման դրության մեջ զրին հողա-
գործներին։

Հառաջացավ լերկու դասակարգ՝ յերկրագործ-
ների բազմանդամ դասակարգ և կալվածատերերի
սակավաթիվ դաս։ Այն՝ ինչ չկար մարդկանց վոչ
թափառական կյանքի ընթացքում և վոչ նախնա-
կան յերկրագործության ժամանակ, ալն անհրա-
ժեշտ դարձավ յերկրագործության բարձրացման
միջոցին։

Յերկու վրակոր.—Շատ դարերի ընթացքում հո-
ղագործ գյուղացիները աշխատում էին վարե-
լահողի վրա, իսկ հողատերերը ոգտվում էին
գյուղացու աշխատանքի արդյունքից և իրենք
ձեռք չէին տալիսի «սև» աշխատանքին։ Ըն-

դարձակ հողերի սեպականատերերը հարկադրում
էին գյուղացիությանը աշխատանք ու բրտինք
թափել իրենց հողի վրա և սրա փոխարեն հատկաց-
նում էին նրանց հնձի մի մասը, վերցնում
էին գյուղացիներից նրանց կենդանիների, թրու-
չունների մի մասը և պահանջում նրանց տնտե-
սության ալս կամ ալն արդյունքը։ Իրենք, հո-
ղատերերը չէին աշխատում, բայց ապահովված
էին ուրիշի աշխատանքով։

Սկզբում կարիքն ստիպում էր գյուղացինե-
րին՝ գնալու հողատիրոջ մոտ, կապալով վերցնե-
լու հող, պարտք վերցնելու դրամ, և ոգնություն
հայցելու։ Կարիքն ստիպում էր նրանց համա-
ձայնելու աշխատանքի ծանր պայմաններին, ու-
ժեղ և հարուստ մարդկանց առաջարկած ծանր
աշխատանքի լծին։ Հետագայում հողատերերն
սկսեցին իրենց իրավունք վերագրել գյուղա-
ցիների աշխատանքի վրա, գյուղացիներն ել
սկսեցին իրենց պարտավորված զգալ կատարելու
հողատերերի պահանջները։ Գյուղացու շատ սե-
րունդներ անտրտունջ աշխատեցին հողատերերի
արտերի վրա (կոռ), կտրում էին, արմատախիլ
անում անտառները, վճարում էին տերերին
հողային հարկ, տալիս էին ընծաներ, տերերի
համար տներ շինում, զանազան ծառայություն-
ներ կատարում։ Հողատերերի շատ սերունդներ

մեծացել և ապրել են յերկրագործ դասակարգի աշխատանքով, չգալով իրենց ձրիակերութունն ու բռնութունը: Հետզհետե կազմակերպվեց հողագործ գյուղացիների մի իրավազուրկ դասակարգ, վոր դատապարտված եր իր ամբողջ կյանքում աշխատելու, իսկ այս դասակարգի վրա իշխում եր մի այլ, հողատերերի դասակարգ, վոր մենաշնորհված եր ոգտվելու ուրիշի աշխատանքից:

Տերերի դասակարգը համարվում եր «ազնիվ», յերկրագործական աշխատանքը նրան թվում եր անարժան և ստորացուցիչ: Նա, իր կարծիքով, կոչված եր կառավարելու ճորտ գյուղացիներին, չարչարելու նրանց. նրա գործն եր զվարճանալ վորսորդութամբ, պատերազմել, ուտել, խմել խոնջուքներում, բայց վոչ յերբեք զբաղվել ֆիզիքական աշխատանքով: Հողատիրոջից վերցրած պարտքի կամ վորևե ոգնության համար վճարում եր ինքը, գյուղացին, նրա վորդիները, թոռները և սերունդներն անխոնջ աշխատանքով և իրենց ազատության կորուստով: Գյուղացին չեր կարող հեռանալ իր տիրոջից վոչ մի տեղ, գյուղացուն ժառանգաբար անցնում եր հպատակվելու և աշխատելու պարտավորությունը, իսկ տերերին ժառանգաբար իրավունքներ տրվում հրամայել գյուղացիներին և ստիպել նրանց

աշխատելու: Հողատերերն ու գյուղացիները յերկու տարբեր տեսակի մարդիկ եյին, առաջնի վոսկորը սպիտակ, յերկրորդինը՝ սև եր:

Դուք հիշում եք, թե ով եր իշխում, կառավարում և դատ կտրում վորսորդ և թափառական տոհմերի մեջ. — սերնդի ավագները, նրանց հետ արյունով կապված եյին սերնդի կրտսեր անդամները և այդ ազգակցության վրա հիմնված եր ավագների իշխանութունը: Ընդհակառակը, նստակյաց յերկրագործության շրջանում պարոն հողատերերը խստիվ տարբերվում եյին իրենց գյուղացիներից, իրենց նրանցից բարձր եյին դասում, հողատերերը ազնիվ մարդիկ եյին, իսկ գյուղացիները՝ գռեհիկ, վորոնցից գարշելի հոտ եր գալիս: Բարեկամանալ գյուղացու հետ, նշանակում ե նվաստացնել նշանավոր սերունդը: Տերերի իշխանության հիմունքը նրանց հողային տիրապետությունն եր:

Հին Հայաստանում մեծ և ուժեղ հողատերերը կոչվում եյին նախարարներ, իշխաններ, հետագայում՝ մեկիքներ, ազնվականներ, կալվածատերներ: Արևմտյան յեվրոպայում՝ բարոններ (վորից և առաջացել ե մեր պարոն բառը), կոմսեր, հերցոգ, լորդ և այլն: Նրանց ուժը չափվում եր իրենց տիրած հողերի մեծությամբ և ճյուղերի քանակով:

Մեծ հողատիրությամբ ոգտւում եյին աշխարհական ազնվականներն ու հոգևորականութիւնը: Վանքերին պատկանում եյին շատ անգամ ահագին հողամասեր, վորոնց վրա աշխատում եյին հարյուր հազարավոր ճորտեր: Ազնվականների հետ հոգևորականութիւնն ել համարվում եր բարձր դասակարգ ալն յերկրներում, ուր նրանք տիրում եին իրավագուրկ ժողովրդին:

5. ՔԱՂԱՔՆԵՐ

Միջին դարերում գորեղ տոհմերը հարձակվեցին թույլ տոհմերի վրա և նրանց տիրելով ստրկացրին, իսկ նրանց յերկիրը նրանք բաժանեցին իրենց նշանավոր զորապետների մեջ. այսպիսով առաջ յեկան ավատական իշխաններ: Սրանցից շատերը բարձր, անառիկ տեղերում շինեցին իրենց համար ամրոցներ կամ դղյակներ, շրջապատեցին իրենց լայն խրամատներով ու պարսպով և այդտեղ ել սկսեցին ապրել՝ թշնամիներից պաշտպանվելու պատնեշ և ապաստան ունենալով: Յեվ վորովհետև իշխանի ներկայութիւնն ավելի վստահութիւնն եր ներշնչում և թշնամու հարձակման միջոցին հնարավորութիւն տալիս նույն դղյակում կամ ամրոցում ապաստանելու, ուստի տարիների ընթացքում,

քում, գլխավորապէս հողագուրկ գյուղացիներ, գալիս բնակութիւնն եյին հաստատում այսպիսի դղյակների շուրջը: Դարերի ընթացքում, յերբ այսպիսի բնակչութիւնը բազմանում եր և վտանգի միջոցին հնարավորութիւնն չեր լինում բոլորին ապաստանել փոքրիկ ամրոցում կամ դղյակում, սկսում եին նույնպիսի խրամատ բաց անել և նույնիսկ պարիսպներ քաշել իրենց բնակութեան շուրջը: Այսպիսով առաջ են գալիս փոքր և մեծ քաղաքներ, վորոնք պատերս զմեքի միջոցին իրենց խրամատների յետև կարողանում են պաշտպանել բնակիչներին, իսկ ամրոցը կամ դղյակը դառնում ե միջնաբերդ, գլխավորապէս ազնվականութիւնը պաշտպանելու: Ճիշտ ե, պարիսպներն ընդգլխադրում եյին թշնամիներին, սակայն մարդիկ կամաց կամաց սովորեցին կռվել և՛ այդ պարիսպների դեմ: Նրանք պարիսպների մատչելի մասի հիմքերն այնքան փորում եյին, վոր պատը քանդվում եր և հնարավորութիւնն եր տալիս այդ բացվածքից ներս մտնելու: Յեվ կամ մեծ մեծ քարեր ելին ձգում պարսպի վրա, վոր քանդվի: Այսպիսի քարեր ձգելու համար թաթարները հնարել ելին մի տեսակ մեքենա, վոր բաբան եր կոչվում:

Քաղաքների բնակիչներն սկզբում պարապել

են գլխավորապես յերկրագործությամբ, այգեգործությամբ, բայց վորովհետև բնակիչների ավելանալով վարելահողի պակասութիւնն և զգացվել, սկսել են ավելի և ավելի առևտրին և արհեստներին անձնատուր լինել:

Սկզբում առևտուրն ունեցել է փոխանակության ձև. մարդիկ իրենց ունեցածն ու արդյունաբերածը փոխանակել են միմյանց հետ, բայց հետո, յերբ փոխանակության միջնորդ դրամի մասին գաղափար են կազմել, սկսել են ուղղակի դրամով ամեն ինչ առնել և ծախել:

Առևտուրն սկզբում յեղել է ներքին, յուրաքանչյուր շրջան բավականացել է իր շրջանի մարդկանց կարիքները լցնելով: Հետո ինկատի առնելով, վոր կրօնական և այլ տոների պատճառով մարդիկ տարվա վորոշ ժամանակներում լսմբվում են վորոշ տեղեր, իրենք ել սկսել են շտապել այնտեղ, տանելով իրենց հետ ապրանքներ, այսպիսով առաջ են յեկել տոնավաճառներ: Չծախված ապրանքը կամ կրկին յետ են բերել, կամ այդպիսի տեղերում պահեստներ հիմնելով պահել են մինչև հետևյալ տոնակատարումը, և կամ տեղից-տեղ ման ածելով՝ վաճառել: Վորոնելով նշանավոր ուխտաւեղիներ՝ վաճառականները հետզհետե հեռացել են իրենց բնակավայրերից և առևտուր սկսել հեռավոր

յերկրների հետ: Այսպես, նույնիսկ ամենահին ժամանակներում Հայաստանի վաճառականները տկերի վրա լաստեր եյին կապում և լողալով Յեփրատ գետի վրայով տանում եյին Հայաստանի ապրանքները Բաբելոն, ուր, նույնիսկ լաստերը ծախելուց հետո, տկերը բարձում եյին եղերի վրա և դամաքով վերադառնում, վորովհետև Յեփրատի սրընթաց հոսանքի հակառակ չեյին կարողանում նավել:

VIII-րդ և IX-րդ դարերում, յերբ արաբացիների տիրապետության միջոցին ճանապարհներ շինվեցին և միջազգային վաճառականութիւնն սկսեց ծաղկել, Հայաստանի միջանի քաղաքներ, ինչպես՝ Արտաշատ, Դվին, Վաղարշապատ, սկսեցին բավական մեծ դեր խաղալ և վաճառականական կենտրոններ դարձան:

Հայաստանից գլխավորապես արտահանում եյին՝ ձի, ջորի, բամբակ, վորդան կարմիր, տորոն, պղինձ, յերկաթ, աղ, ցորեն, գարի, ծիրան, չիր, խաղող, չամիչ, տառելա և այլն:

Քաղաքների բնակիչները պարապում եյին և արհեստներով: Ամեն մի արհեստավոր ունենում էր աշակերտներ, վորոնք տարիների ընթացքում ավարտում եյին արհեստը և դառնում արհեստավորի ոգնական—բանվոր: Միառժամանակ ել այսպես աշխատելուց հետո բանվորը վարպետ

եր ձեռնադրվում և ինքնուրույն գործ սկսում։ Արհեստավորներն ըստ տեսակի համախմբվելով՝ կազմում եյին համաքարություններ, իրենց ընդհանուր շահերը պաշտպանելու, քրեության առաջնառնելու և փոխադարձ ոգնության հասնելու համար։ Վերջապես, յերբ շոգու և քարածուխի գործածությունն ընդհանրացավ, արհեստանոցները մեծանալով դարձան գործարաններ, և նախկին վարպետները՝ սրանց կառավարիչներ։ Սրանք այլևս չբավականացան իրենց նախկին սակավաթիվ աշակերտներով և յերկու-յերեք բանվորներով, սկսեցին բազմաթիվ բանվորներ աշխատեցնել, սրանց արտադրածի փոքրագույն մասը միայն տալով նրանց՝ մեծագույնը պահեցին իրենց։ Այսպիսով նրանք նյութականապես շատ հարստացան։ Սրանց վորդիքը, ունենալով նյութական ապահովություն և ստիպված չլինելով ապրուստի համար ամբողջ ուրը տքնել, սկսեցին գիտություն ձեռք բերել։ Յեվ ահա նյութի և գիտության, այս յերկու հզոր ուժերի շնորհիվ անքան զորեղացան, վոր հեղափոխություն առաջ բերին և տապալեցին այն բոլոր արտոնությունները, վոր վայելում եր նախկին տիրապետող ազնվական դասակարգը։ Սակայն, խլելով այդ դասակարգից կառավարության դեկը, այս յերրորդ դասակարգն ել, վոր սկզբում կռվում եր

հանուն ազատության, հավասարության, յեղբայրության, իրեն վերապահեց շատ ու շատ արտոնություններ, սահմանափակեց բանվորների ազատությունը և տիրացավ նրանց։ Այս դրությունը շարունակվեց և շարունակվում եր, մինչև վոր բանվորական դասակարգը հեղափոխության միջոցով բարելավելով իր նյութական դրությունը՝ կարողացավ մտավոր ուժ ձեռք բերել և կառավարության դեկը իր ձեռքն առնել։ Այս հեղափոխությունը տեղի ունեցավ Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

եր ձեռնադրվում և ինքնուրույն գործ սկսում:
 Արհեստավորներն ըստ տեսակի համախմբվելով՝
 կազմում եյին համաքարութուններ, իրենց ընդ-
 հանուր շահերը պաշտպանելու, քրքության առաջն-
 առնելու և փոխադարձ ոգնության հասնելու հա-
 մար: Վերջապես, յերբ շոգու և քարածուխի գործա-
 ծությունն ընդհանրացավ, արհեստանոցները մե-
 ծանալով դարձան գործարաններ, և նախկին
 վարպետները՝ սրանց կառավարիչներ: Սրանք
 այլևս չբավականացան իրենց նախկին սակավա-
 թիվ աշակերտներով և յերկու-յերեք բանվորնե-
 րով, սկսեցին բազմաթիվ բանվորներ աշխատե-
 ցնել, սրանց արտադրածի փոքրագույն մասը
 միայն տալով նրանց՝ մեծագույնը պահեցին
 իրենց: Այսպիսով նրանք նյութականապես շատ
 հարստացան: Սրանց վորդիքը, ունենալով նյու-
 թական ապահովութուն և ստիպված չլինելով
 ապրուստի համար ամբողջ ուրը տքնել, սկսեցին
 գիտութուն ձեռք բերել: Յեւ ահա նյութի և
 գիտության, այս յերկու հզոր ուժերի շնորհիվ
 անքան զորեղացան, վոր հեղափոխութուն առաջ
 բերին և տապալեցին այն բոլոր արտոնություն-
 ները, վոր վայելում եր նախկին տիրապետող
 ազնվական դասակարգը: Սակայն, խլելով այդ
 դասակարգից կառավարության դեկը, այս յեր-
 րորդ դասակարգն ել, վոր սկզբում կռվում եր

հանուն ազատության, հավասարության, յեղ-
 բայության, իրեն վերապահեց շատ ու շատ
 արտոնություններ, սահմանափակեց բանվոր-
 ների ազատութունը և տիրացավ նրանց: Այս
 դրությունը շարունակվեց և շարունակվում եր,
 մինչև վոր բանվորական դասակարգը հեղափո-
 խության միջոցով բարելավելով իր նյութական
 դրությունը՝ կարողացավ մտավոր ուժ ձեռք բե-
 րել և կառավարության դեկը իր ձեռքն առնել:
 Այս հեղափոխությունը տեղի ունեցավ Ռուսաս-
 տանում 1917 թ. հոկտեմբերին, Կոմունիստա-
 կան կուսակցության ղեկավարությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Վարելահող բանալու տնտեսություն	3
2. Յերկրագործության բարելավումը, յիսադաշտ- յան սերմնավարական տնտեսություն	8
3. Գյուղացիներին հողի հետ կապելը	10
4. Սև ու սպիտակ վոսկոր	15
5. Քաղաքներ	22



ՀՀ Ազգային գրադարան



NL0415207



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.